

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԿԱՌԼԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Ջուլիետա Արամայիսի Թադևոսյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Թորոս Շահենի Թորոսյան

տնտեսագիտության թեկնածու
Հրանտ Զավենի Հարությունյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան


Պաշտպանությունը կայանալու է 2017թ. նոյեմբերի 21-ին, ժամը 15³⁰-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ՀՀ, 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հոկտեմբերի 21 -ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**



տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Ա.Սուվարյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլն առանձնահատուկ է նրանով, որ երկրներն իրենց առաջընթացի ճանապարհին շեշտադրում են հատկապես մարդկային ռեսուրսների՝ որպես զուբալ զարգացումներին համարժեք մրցունակ տնտեսություն ձևավորողների դերակատարումը՝ արդյունքում ստեղծելով գիտելիքի վրա հիմնված կամ որ նույնն է՝ ինովացիոն տնտեսություն: Այս առումով կարևորվում են և՛ պետական մարմինների կողմից ինովացիոն համակարգի ձևավորմանն ուղղված քայլերը, և՛ առանձին գիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը, և՛ առևտրային կազմակերպությունների կողմից ինովացիաների առևտրայնացումը:

Հիշյալ հարցադրումների շրջանակներում օրվա հրամայականն է ՀՀ-ում ազգային ինովացիոն գործուն համակարգ ունենալու անհրաժեշտությունը, որը բազմիցս վկայակոչված և դեռևս կյանքի չկոչված գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու նախապայմանն է:

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ հայեցակարգային և մեթոդաբանական մոտեցումների², առանձին երկրների հաջողված փորձի կիրառման տարբերակների³ ուսումնասիրությունն ու դրանց տեղայնացման գործուն եղանակների մշակումը կարող է նպաստել ՀՀ գիտության, կրթության և արդյունաբերության ոլորտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Ավելին, լիարժեք օգտագործելով երկրի գիտական ներուժը՝ հնարավոր է ստեղծել համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխանող, արդյունավետ գործող ազգային ինովացիոն համակարգ և դրանով իսկ մրցունակ դիրքեր գրավել համաշխարհային շուկայում:

ՀՀ-ում վերջին տարիներին փորձ է արվում ձևավորել ինովացիոն տնտեսություն⁴, սակայն ՀՀ տնտեսության մակրոտնտեսական զարգացման արդի վիճակը փաստում է, որ ՀՀ ներկա տնտեսությունը դեռևս հեռու է համաշխարհային տնտեսության մեջ ինովացիոն տնտեսության ընդունված չափանիշներից: Թերևս սա է պատճառը, որ խոսել ՀՀ-ում ձևավորված ազգային ինովացիոն համակարգի մասին դեռևս վաղ է, քանի որ համակարգը կազմող առանցքային տարրերի զարգացման մակարդակը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունելի չափանիշներին, ինչպես նաև բացակայում է գիտահետազոտական

¹ Վարդանյան Գ.Ի., Գիտելիքահենք տնտեսություն, Երևան 2008, էջ 54:

² Freeman, C., «Technology policy and economic performance» // Lessons from Japan, Frances Printer Publishers, London, New York, 1987. Lundvall, Bengt-Åke, «Product innovation and user-producer interaction» // Aalborg Universitetsforlag, 1985. Mowery, D.C. and Oxley, J.E., «Inward technology transfer and competitiveness: the role of National Innovation Systems» // Cambridge Journal of Economics, 1995.

³ Моргунов Е.В., Снегирев Г.В., «Национальная (государственная) инновационная система: сущность и содержание» // Собственность и рынок, 2004, стр. 10-21.

⁴ Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20 N2 նիստի արձանագրային որոշում:

լաբորատորիաների, համալսարանների և ինովացիոն ձեռնարկությունների միջև փոխադարձ կապը: Բացի այդ, ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորմանը չի մասնակցում ՀՀ ողջ գիտատեխնիկական ներուժը, այս գործում գրեթե ներգրավված չեն մարզերը, գոյություն չունի միասնական և համակարգված պետական ինովացիոն քաղաքականություն, ինչպես նաև, բացառությամբ ՏՀՏ ոլորտի, գոյություն չունի գիտատեխնիկական արդյունքների առևտրայնացման ընդհանուր ռազմավարություն, ինչը և հանգեցնում է կենտրոնացվածության և հետազոտվող շրջանակներում անհամաչափ զարգացման հիմնախնդիրների ձևավորմանը:

Հասունացած խնդիրների լուծումները հնարավոր է գտնել ինովացիոն տնտեսություն ունեցող երկրների առաջավոր փորձի ուսումնասիրության և ՀՀ-ում դրա տեղայնացման, համակարգագոյացնող արդյունավետ մեխանիզմների մշակման ու կիրառման, տնտեսության մակրո և միկրո մակարդակներում դեպի ինովացիոն զարգացման տանող բարեփոխումների իրականացման, զարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակման միջոցով՝ իրնթանս ձևավորելով ՀՀ ազգային ինովացիոն համակարգը և նպատակադրելով վերջինիս աստիճանական ինտեգրումը գլոբալ ինովացիոն համակարգին: Վերոնշյալը պայմանավորում է ատենախոսության թեմայի *արդիականությունը և հրապարակությունը*:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է հետազոտել և վերլուծել արդյունավետ գործող ազգային ինովացիոն համակարգի ձևավորման միջազգային փորձի հայեցակարգային և մեթոդաբանական մոտեցումները և դրա հիման վրա առաջարկել դեպի գլոբալ ինովացիոն համակարգ կողմնորոշված, արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և հետագա կատարելագործման գիտականորեն հիմնավորված մոտեցումներ:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել մրցունակ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մոտեցումները՝ տեխնոլոգիաների միջազգայնացման համատեքստում,
- ազգային ինովացիոն համակարգերի ձևավորման միջազգային փորձի վերլուծության հիման վրա բացահայտել ազգային տնտեսության մեջ դրա ներդրման հնարավորությունները,
- տնտեսաչափական վերլուծության հիման վրա բացահայտել գիտատեխնիկական ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա,
- ուսումնասիրել մրցունակ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում համաշխարհային արդի տնտեսական զարգացումների համատեքստում,

- հիմնավորել ՀՀ ազգային ինովացիոն համակարգի համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին ինտեգրվելու անհրաժեշտությունը և բացահայտել առկա հիմնախնդիրները,
- մշակել ՀՀ ազգային ինովացիոն համակարգում միջազգային փորձի ներդրման ուղիներ և առաջարկել ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմներ:

Արենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը ՀՀ ազգային ինովացիոն համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման գործում միջազգային առաջավոր փորձի տեղայնացման, վերջինիս գլոբալ ու տարածաշրջանային ինովացիոն համակարգերին ինտեգրման և երկրի մրցունակության բարձրացման հայեցակարգային հիմնախնդիրները, ինչպես նաև համաշխարհային ինովացիոն քաղաքականության մեջ տեղ գտած կառուցվածքային տեղաշարժերն ու զարգացման միտումները:

Արենախոսության տեսամթոթղաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության, կառավարման, ինովացիաների ժամանակակից տեսությունները, դոկտրինաներն ու հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները, ազգային ինովացիոն համակարգում միջազգային փորձի ներդրման բնագավառում տեղ գտած բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից այս բնագավառում կատարված ուսումնասիրությունները:

Բարձրացված հիմնախնդիրները, որոնք կարող են փոխել երկրի տնտեսության զարգացման շարժընթացը, հանգամանորեն ուսումնասիրվել է՝ հիմք ընդունելով և համադրելով արտասահմանյան և հայ (Յու. Սուվարյան, Ս. Ղանթարջյան, Գ. Վարդանյան, Հ. Բագրատյան, Զ. Շումպետեր, Բ. Ֆրիմեն, Բ. Լունդվալ, Գ. Գոլդշտեյն, Վ. Կիսելյովա և ուրիշներ) հեղինակների մոտեցումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և արտասահմանյան երկրների օրենքները և իրավական ակտերը, ՀՀ կառավարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ֆինանսների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների, այդ թվում՝ Մտավոր սեփականության գործակալության, միջազգային կազմակերպությունների (Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և այլն) հրապարակումները և պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական, խմբավորումների և համեմատական վերլուծությունների, տնտեսաչափական, ռեգրեսիոն, ինդեքսային, ժամանակային լագերի, հարաբերական մեծությունների մեթոդներ:

Արենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսության հիմնական գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ արդյունքներում.

1. Գնահատվել են ՀՀ ՀՆԱ ֆիզիկական ծավալի ինդեքսի և արտահանման կառուցվածքում գիտատար ոլորտի արտադրանքի մասնաբաժնի վրա գիտատեխնիկական ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների ազդեցությունը և ՀՀ-ում «գիտություն-կրթություն-արտադրություն» շղթան՝ օգտագործելով տնտեսաչափական ռեգրեսիոն մոդելներ:
2. Համաշխարհային մրցունակության և ինովացիոն համաթվերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ միջազգային մրցունակության ցածր վարկանիշը պայմանավորող նորամուծական բաղադրիչ պարունակող գործոնները, որոնց բարելավման նկատառումներով մշակվել է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ստեղծման և առևտրայնացման առավել ընդգրկուն և ամբողջական լոգիստիկ շղթա (համակարգաստեղծ նախաձեռնություններ, իրավական հենք, կրթություն, ֆիզիկական ենթակառուցվածքներ, ֆինանսական ենթակառուցվածքներ, բիզնես կարողություններ) ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և միջազգայնացման հիմնախնդիրների լուծման համատեքստում:
3. Մշակվել են համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին ինտեգրվելու մեխանիզմներ՝ միջազգային առաջավոր փորձի ներգրավման, պետական և մասնավոր ֆինանսական ներդրումների ուղղորդման և ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման նպատակով:

Արենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:

Հետազոտությունում մշակված գիտատեսական ընդհանրացումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների (ՀՀ կառավարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների նախարարությունների և այլն) կողմից ազգային ինովացիոն համակարգում միջազգային փորձի ներդրման հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու գործընթացում, ինչպես նաև ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ուղիների մշակման և համաշխարհային խոշոր ինովացիոն հետազոտական ծրագրերում ՀՀ հետազոտական կենտրոնների ինտեգրման նախագծերի և ծրագրերի կազմման ժամանակ:

Արենախոսության տեսական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել ազգային ինովացիոն համակարգի և տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրներով զբաղվող տնտեսագետների, կառավարման մասնագետների և ֆինանսիստների համար:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Արենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստերում, ԵԿՏՍ՝ Երիտասարդ գիտնականների գիտաժողովներում (2014թ. նոյեմբեր), Եվրասիա միջազգային համալսարանում կազմակերպված «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները»

խորագրով գիտաժողովում (2014թ.-ի դեկտեմբեր), ինչպես նաև «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով ՀՊՏՀ 25-րդ միջազգային գիտաժողովում (2015թ. նոյեմբեր):

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված վեց գիտական հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 160 էջ, պարունակում է 8 գծապատկեր և 28 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման անհրաժեշտությունը և դերը տնտեսության զարգացման գործում»** գլխում ուսումնասիրվել են ազգային ինովացիոն համակարգի ձևավորման տեսական հիմքերը, ինչպես նաև վերլուծվել է ազգային ինովացիոն համակարգերի ձևավորման միջազգային փորձը:

Հայ և արտասահմանյան տեսաբանների, միջազգային կառույցների կողմից առաջարկվող ազգային ինովացիոն համակարգի (այսուհետ՝ ԱԻՀ) տարբեր սահմանումների և մեկնաբանությունների, ինչպես նաև համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հետազոտության մեջ տեղ է գտել ազգային ինովացիոն համակարգի լրամշակված և առավել ընդգրկուն սահմանում, այն է.

Ազգային ինովացիոն համակարգը հասարակության բարեկեցության բարձրացման, գլոբալ և տարածաշրջանային ինովացիոն համակարգերին ինտեգրման նպատակով տրվալ երկրի սահմաններում ինովացիոն քաղաքականություն և գործունեություն իրականացնող ինստիտուտների ամբողջություն է, որոնց գործունեության արդյունքներն առևտրայինացման միջոցով ներդրվում են ոչ միայն ազգային, այլ նաև համաշխարհային տնտեսության մեջ:

Ազգային ինովացիոն համակարգ չունենալը ինքնին բացասական ազդեցություն ունի տնտեսության հետագա հեռանկարային զարգացման վրա, սակայն ունի մեկ առավելություն, որը բացատրվում է նրանով, որ համաշխարհային պրակտիկայում առկա է «ուշացած բարեփոխումների էֆեկտ» հասկացությունը, այսինքն՝ այն, որ մենք դեռևս չենք կարողացել ձևավորել գործուն համակարգ, ապագայում կարող ենք ձևավորել՝ հաշվի առնելով այլ երկրների փորձը, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնց վերջիններս բախվել են ազգային ինովացիոն համակարգ ստեղծելու ճանապարհին, ինչն էլ իրավամբ համարվում է ուշացած բարեփոխումների դրական ազդեցությունը:

Հետազոտության ընթացքում արձանագրվել է, որ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մոտեցումները պայմանականորեն կարելի է բաժանել 4 խմբի.

1. սկզբունքորեն նոր մոտեցման որդեգրում և ազգային ինովացիոն նոր համակարգի ստեղծում,
2. որևէ երկրի ազգային ինովացիոն գործող համակարգի կրկնօրինակում,
3. առանձին երկրների փորձից և Հայաստանի առանձնահատկություններից ելնելով խառը մոդելի մշակում,
4. ազգային ինովացիոն համակարգի մոդելի մշակումից հրաժարում՝ կատարելով տարածաշրջանային որևէ ավելի խոշոր ինովացիոն համակարգում ենթահամակարգի դեր:

Հետազոտության արդյունքում հիմնավորելով ազգային ինովացիոն համակարգի ձևավորման վերոնշյալ չորս մոտեցումներից երեքի բարդ իրականացվելի կամ ոչ նպատակահարմար լինելը՝ «Ստեղծության համար հեղինակի կողմից առանձնացվել է ազգային ինովացիոն համակարգի ձևավորման երրորդ՝ խառը մոտեցումը:

Այս համատեքստում, ուսումնասիրվել են առանձին հեղինակների, ինչպես նաև համաշխարհային հեղինակություն ներկայացնող կազմակերպությունների հետազոտությունները⁵, որոնք անմիջականորեն առնչվում են այս կամ այն երկրների, ինչպես նաև երկրների խմբերի ինովացիոն համակարգերին, պետական ինովացիոն քաղաքականությանը և այս ոլորտում առանձին պետությունների հաջողություններն ու դիրքը արտահայտող համաթվերին:

Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետության ինովացիոն քաղաքականությունը ցանկացած պետության ինովացիոն համակարգի հիմնարար տարրն է, հեղինակն ավելի մանրամասն վերլուծել է այս ոլորտում առկա միջազգային փորձը, մասնավորապես, ինովացիոն պետական քաղաքականությունը ինովացիոն զարգացման տարբեր ուղղություններ ընտրած երկրներում և, արդյունքում, առանձնացվել են «Ստեղծության մեջ կիրառելի, գործուն մոտեցումներ, որոնք կարող են ապահովել մեր երկրի համար գիտելիքահեն տնտեսական աճ և համաշխարհային տեխնոլոգիական շուկայում առաջատար դիրքեր:

Համաշխարհային տնտեսության մեջ նորարարության ոլորտում երկրների դիրքերը գնահատվում են Համաշխարհային ինովացիոն համաթիվով: Հետազոտության շրջանակներում վերլուծվել են Համաշխարհային ինովացիոն համաթվի այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ինստիտուտները, մարդկային կապիտալը, ենթակառուցվածքները, շուկայի իմաստաբանությունը, բիզնեսի իմաստաբանությունը, գիտելիքի և տեխնոլոգիաների արդյունքները, ստեղծագործական արդյունքները, որոնց վերլուծության միջոցով, հեղինակն

⁵ Մտավոր սեփականության համաշխարհային գործակալություն՝ Համաշխարհային ինովացիոն համաթիվ <http://www.wipo.int/portal/en/index.html>, Համաշխարհային տնտեսական համաժողով՝ Համաշխարհային մրցունակության համաթիվ <https://www.weforum.org/>

ընդգծում է, որ կարելի է մշակել գործուն ինովացիոն քաղաքականություն և ձևավորել ազգային ինովացիոն մոդել:

Համաշխարհային ինովացիոն համաթվի ցուցանիշները հեղինակի կողմից վերլուծվել են, համադրելով ԵԱՏՄ անդամ երկրների համանման ցուցանիշների հետ: Պետք է նշել, որ Հայաստանն իր գործընկեր երկրներին զիջում է մի շարք ցուցանիշներով (տե՛ս, Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Համաշխարհային ինովացիոն համաթվի ցուցանիշները 2014թ.⁶

Սյուն/ ենթասյուն	Ցուցանիշի անվանումը	Հայաստան	Բելառուս	Բուսստան	Ղազախստան	Ղրղզստան
A	Համաշխարհային ինովացիոն ինդեքս (համաթիվ) GII	36.1	37.1	39.1	32.8	27.8
B	Ինովացիոն արդյունավետություն հարաբերակցությունը	0.8	0.8	0.8	0.6	0.5
C	Ինովացիոն մուտքի ենթահամաթիվ	39.4	40.5	43.8	41.1	37.9
D	Ինովացիոն արդյունքի ենթահամաթիվ	32.7	33.7	34.5	24.4	17.6
1	Ինստիտուտները	66.4	52.1	56.4	61.1	52.9
2	Մարդկային կապիտալը և հետազոտությունները	21.4	39.8	44.5	30.0	29.4
3	Ենթակառուցվածքները	30.0	39.9	41.1	43.8	31.3
4	Շուկայի իմաստաբանությունը	50.4	46.0	42.5	44.1	53.6
5	Բիզնեսի իմաստաբանությունը	28.8	24.9	34.3	26.4	22.4
6	Գիտելիքի և տեխնոլոգիաների արդյունքները	31.8	38.8	37.6	24.8	21.1
7	Ստեղծագործական արդյունքները	33.6	28.6	31.4	23.9	14.1

Այսպիսով, ատենախոսության առաջին գլխում ուսումնասիրելով ինովացիաների բնագավառում մեծ հաջողությունների հասած երկրների փորձը և վերջիններիս կողմից այդ ոլորտում վարվող քաղաքականությունը, հեղինակը նկատում է, որ ինովացիաների ազգային մոդելը ձևավորելիս պետք է տարվի բազմավեկտոր զարգացման քաղաքականություն: Մյուս կողմից, հեղինակն ընդգծում է, որ չպետք է անտեսել այն իրողությունը, որ համակարգաստեղծ տարրերից յուրաքանչյուրն իր ուրույն դերակատարումն ունի ինովացիաների զարգացման գործում, ուստի և առանց համակարգային մոտեցումների անհնար է պատկերացնել ազգային գործուն ինովացիոն համակարգի ձևավորումը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում վերլուծվել է ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորման իրավական դաշտը, ՀՀ գիտատեխնիկական ներուժը, երկրում վարվող պետական ինովացիոն քաղաքականությունը, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ

⁶ Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպության կողմից մշակվող «Համաշխարհային ինովացիոն համաթիվ» կայք՝ <https://www.globalinnovationindex.org/userfiles/file/reportpdf/GII-2014-v5.pdf> , 02.02.2015թ.

ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնախնդիրները երկրի միջազգային մրցունակության բարձրացման համատեքստում:

Հայաստանում գիտության զարգացման կարևորագույն հիմնահարցերից է գիտության տարածքային բաշխվածության գրեթե բացակայություն: Վերլուծության ընթացքում բացահայտվել է, որ գիտական մշակումներում ներգրավված են ընդամենը 5 մարզեր և Երևան քաղաքը, իսկ մյուս մարզերը դուրս են մնացել ոլորտի հետաքրքրության շրջանակներից: Գիտատեխնիկական աշխատանքների ֆինանսավորման ծավալների տեսանկյունից ևս բացարձակ առաջատարը հետազոտվող ժամանակահատվածում եղել է Երևանը, որտեղ ծախսվել են ամբողջ գիտատեխնիկական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների ավելի քան 90 %-ը, մնացածը բաժին է ընկնում 5 մարզերին:⁷

Հայաստանում դեռևս պահպանվում է նախկին խորհրդային տարիների այն մոտեցումը, երբ ինովացիոն քաղաքականությունը հիմնականում ուղղված էր գիտատեխնիկական արդյունքների առաջարկի ձևավորմանը, մինչդեռ, հանրահայտ փաստ է, որ եթե մասնավոր հատվածի կողմից ինովացիաների նկատմամբ գրեթե բացակայում է պահանջարկը, կամ վատթարագույնը՝ այդ հատվածում բացակայում է համապատասխան ներուժը, ապա ինովացիոն համակարգը չի կարող արդյունավետ գործել: Այսպիսով, հեղինակն արձանագրում է, որ բացառությամբ ՏՀՏ ոլորտի, ՀՀ-ում գոյություն չունի գիտատեխնիկական արդյունքների առևտրայնացման ընդհանուր ռազմավարություն, որը հաշվի կառներ գործարար հատվածի «ինովացիաներն ընդունելու» հնարավորությունը:

ՀՀ ինովացիոն գործունեության պետական կառավարման համակարգն ունի մի շատ կարևոր առանձնահատկություն: Այն է՝ Գիտության պետական կոմիտեի կողմից (այսուհետ՝ ԳՊԿ) իրականացվող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կառավարման գործունեությունը կապված չէ ինովացիոն գործունեության հետ, որն իրականացվում է լիազոր մարմին հանդիսացող նախարարության կողմից: Ըստ էության, այն գիտահետազոտական նախագծերը, որոնք ֆինանսավորվում են պետության կողմից, հետագայում պետք է ներառվեն նաև նախարարության կողմից իրականացվող ծրագրերի մեջ, սակայն գործնականում նման համագործակցության մեխանիզմներ կամ գործիքներ դեռևս չկան:

Առենախոսության մեջ հեղինակը փաստում է, որ գոյություն ունի նաև նորամուծության հասկացության նեղ ընկալում այն իմաստով, որ պետք է շեշտադրումը կատարել ոչ միայն առաջատար տեխնոլոգիական նորամուծությունների, այլև այլ երկրներում արդեն գոյություն ունեցող, սակայն Հայաստանի շուկայի համար նորույթ հանդիսացող տեխնոլոգիաների, ինչպես նաև ինովացիոն գործընթացների և ծառայությունների ձեռք բերման և ներդրման վրա: Այս համատեքստում հեղինակը կարևորում է ոչ տեխնոլոգիական մոտեցումները, ինչպես նաև սոցիալական և կառավարչական նորամուծությունների առկայությունը:

⁷ ՀՀ սոցիալական վիճակը 2014թ., էջ 297-298:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ ցանկացած երկրի ինովացիոն համակարգի ձևավորման գործում իր վճռորոշ դերակատարումն ունի պետական քաղաքականությունը, որը կարող է զարգացած ինովացիոն տնտեսություն ունեցող երկրներից փոխառված արդյունավետ գործելակերպն ու մեթոդները ներդնելու համապատասխան միջավայր ձևավորել:

Այս համատեքստում կարող ենք փաստել, որ ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմքերը ամբողջությամբ վերանայման կարիք ունեն, քանի որ դրա մեջ, նախ և առաջ, պետք է ընդգրկել ողջ ակադեմիական համակարգն իր առկա ներուժով, մյուս կողմից դրան պետք է ավելանա բուհական համակարգը, այնինչ՝ ազգային ինովացիոն համակարգը կառուցվում է առանց գիտության և կրթության: Մյուս կողմից, հստակ չի երևում նաև կրթություն-գիտություն-արտադրություն միասնական շղթան, առանց որի ինչպես երևում է համաշխարհային պրակտիկայից, ինովացիոն համակարգ կառուցելն անհնար է: Հեղինակը նաև նկատում է, որ այս ամենի հետ մեկտեղ նկատելիորեն գերազնահատված է ազատ տնտեսական գոտիների և տեխնոպարկերի դերը, քանի որ առանց համապատասխան գիտական կադրերի Հայաստանում այդ տնտեսական մոդելներն արագ զարգացում չեն ստանա: Կադրերի հոսունությունը կանգնեցնելու և գիտության ապակենտրոնացման համար ավելի մասշտաբային ծրագրեր են անհրաժեշտ, այնպիսին ինչպիսին իրականացվում է Ռուսաստանի Դաշնությունում Սկոլկովո կենտրոնի⁸ շրջանակներում: Նույն տրամաբանությունը պետք է գործի նաև ֆինանսական ենթակառուցվածքների ստեղծման մոդելի շրջանակներում, դեռ ավելին՝ նորարարությունների համաֆինանսավորման դրամաշնորհային նախաձեռնությունները պետք է ունենան այնքան մեծ ընդգրկվածություն, որ ոչ մի տաղանդավոր երիտասարդ կամ նորարարական նախագիծ ուշադրությունից դուրս չմնա: Խնդիրը նաև նրանում է, որ նորարարական նախագծերի շուկան սահմաններ չի ճանաչում, ուստի Հայաստանում ստեղծված նախագծերը հեշտությամբ կարող են հաջողության հասնել համաշխարհային շուկայում, այսինքն՝ հարկավոր է նաև մեխանիզմներ մշակել, որոնք կհանգեցնեն նորարարությունների միջազգայնացմանը:

Ատենախոսության մեջ տեղ է գտել նաև ՀՀ գիտատեխնիկական ներուժի՝ որպես ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնական գործոնի տնտեսաչափական վերլուծությունը:

ՀՀ-ում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վրա իրականացված գիտատեխնիկական և գիտահետազոտական աշխատանքների հիմնական ցուցանիշների ազդեցության բացահայտման, տնտեսաչափական մոդելների կառուցման համար առանձնացվել է ներքոնշյալ արդյունքային և գործոնային հատկանիշների կազմը (տե՛ս, Աղյուսակ 2):

⁸ Սկոլկովո տեխնոպարկի պաշտոնական կայք՝ <http://sk.ru/technopark/>, 15.03.2015թ.

Աղյուսակ 2

Տնտեսաչափական վերլուծության նպատակով առանձնացված արդյունքային և գործոնային հատկանիշների կազմը

Ցուցանիշներ	Նշանակումներ
Արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը, %	y_1
ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը նախորդ տարվա համեմատությամբ (%)	y_2
Գիտատեխնիկական աշխատանքների ծավալները (մլն. դրամ)	x_1
Գիտատեխնիկական և հետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատողների թվաքանակը (մարդ)	x_2
Հետազոտական աշխատանքների ներքին ծախսեր (մլն. դրամ)	x_6

Նշված արդյունքային հատկանիշների համար կառուցվել են եռաչափ ռեգրեսիոն մոդելներ (տե՛ս, Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ-ում ՀՆԱ-ի իրական ծավալների և ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի վրա գիտատեխնիկական-հետազոտական ոլորտի հիմնական ցուցանիշների ազդեցության տնտեսաչափական վերլուծության արդյունքները (2001-2014թթ. տվյալներով)

	Արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինի դեպքում	ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի դեպքում
1	Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, մլն. դրամ, (x_1)	
	$\hat{y}_{1t} = -1.485 + 0.0005x_{1,t-3}$ <p>(5.4)</p> $R = 0.864; R^2 = 0.764; F = 29.3$ $t_{crit} = 2.23; F_{crit} = 4.96$	$\hat{y}_{2t} = 120.5 - 0.0018x_{1,t-1}$ <p>(2.5)</p> $R = -0.587; R^2 = 0.345; F = 6.32$ $t_{crit} = 2.17; F_{crit} = 4.75$
2	Գիտատեխնիկական և հետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատողների թվաքանակը (մարդ), (x_2)	
	$\hat{y}_{1t} = 10.95 - 0.0014x_{2,t-2}$ <p>(3.18)</p> $R = -0.692; R^2 = 0.479; F = 10.1$ $t_{crit} = 2.2; F_{crit} = 4.96$	$\hat{y}_{2t} = 62.08 + 0.0069x_{2,t-2}$ <p>(2.29)</p> $R = 0.552; R^2 = 0.305; F = 5.24$ $t_{crit} = 2.2; F_{crit} = 4.84$
3	Հետազոտական աշխատանքների ներքին ծախսեր (մլն. դրամ), (x_6)	
	$\hat{y}_{1t} = -0.846 + 0.0005x_{6,t-3}$ <p>(6.04)</p> $R = 0.886; R^2 = 0.785; F = 36.6$ $t_{crit} = 2.23; F_{crit} = 3.98$	$\hat{y}_{2t} = 118.5 - 0.0017x_{6,t-1}$ <p>(2.6)</p> $R = -0.598; R^2 = 0.358; F = 5.24$ $t_{crit} = 2.17; F_{crit} = 4.75$

Փաստորեն, հեղինակի կողմից իրականացված տնտեսաչափական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ գիտության ոլորտում կատարվող ծախսերը, որոնց գերակշիռ մասը կատարվում է պետության բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև ստեղծված գիտատեխնիկական արդյունքները որևէ

ազդեցություն չունեն մակրոտնտեսական հիմնական ցուցանիշներից հետևյալ երկուսի՝ ՀՆԱ ֆիզիկական ծավալի ինդեքսի և արտահանման կազմում բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժնի վրա: Սա առավել ակնհայտ է դարձնում, թե որքանով է ինովացիոն համակարգը կայացած, գործուն և մրցունակ, ինչպես նաև մատնանշում է «գիտություն-կրթություն-արտադրություն» շղթայի առկա խզումների առանձնահատկությունները ՀՀ-ում, ինչի արդյունքում գիտատեխնիկական արդյունքները չեն ներդրվում տնտեսության մեջ, հետևաբար, չի ապահովվում գիտելիքահեն տնտեսական աճ և տեխնոլոգիաների միջազգային շուկայի մասնաբաժնի աճ:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող զարգացումները, առանձին տարածաշրջաններում նկատվող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական փոփոխությունները ստիպում են տարբեր երկրների վերանայել իրենց տնտեսական քաղաքականությունը, մշակել մրցունակ և ուժեղ ռազմավարություններ և որ ամենակարևորն է՝ ձևավորել մրցունակ ազգային ինովացիոն համակարգ: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում նաև աշխարհի մակարդակով մրցունակության դիրքերի ուսումնասիրությունը, որը գնահատվում և հաշվարկվում է առանձին համաթվի՝ Համաշխարհային մրցունակության համաթվի միջոցով, ըստ որի 2014-2015 թթ. Հայաստանը 6 կետով թուլացրել է իր դիրքերը նախորդ տարվա համեմատ և հայտնվել է 85-րդ հորիզոնականում⁹:


Այսպիսով, վերոնշյալ բոլոր ցուցանիշներն ու ոլորտները միմյանց հետ խիստ փոխկապակցված են և մեկ խնդրի ուսումնասիրությամբ միանգամից բացահայտվում են այն փոխկապակցված և հարակից ոլորտները, որոնք տանում են մրցակցային դիրքերի անկմանը կամ ինովացիաների բացակայությանը: Հետազոտության արդյունքում հեղինակը արձանագրում է, որ համալիր և հաջորդական քայլերի միջոցով կարելի է հասնել երկրի մրցունակության բարձրացմանը, իսկ առանց մրցունակության չենք կարող ունենալ կատարելագործված և զարգացած ազգային ինովացիոն համակարգ: Այս պարագայում խնդրի լուծման հիմքերը մնում է տեսնել միայն միջազգային փորձի ուսումնասիրության, ինչպես նաև նորամուծական տնտեսություն ձևավորելու և ազգային ինովացիոն համակարգը զարգացնելու բացթողումները շտկելու մեջ:

Ատենախոսության երրորդ՝ **«Ազգային ինովացիոն համակարգի կարարեւա-գործման և միջազգային փորձի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում»** գլխում բացահայտվել են համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ինտեգրման հիմնախնդիրները, միջազգային փորձի կիրառման և ինովացիոն համակարգի կատարելագործման ուղիները:

Ատենախոսության մեջ տեղ գտած հետազոտությունների արդյունքում, հեղինակը հանգում է այն եզրահանգման, որ եթե առկա է ազգային ինովացիոն համակարգ, ապա մնում է միայն ինտեգրացիոն գործընթացը կազմակերպել և ներգրավվել խոշոր հետազոտական ինովացիոն նախագծերի մեջ, իսկ եթե չունենք

⁹ Համաշխարհային տնտեսական համաժողովի պաշտոնական կայք՝ <http://www.weforum.org/reports/global-competitiveness-report-2014-2015> 12.06.2015թ.

ձևավորված ազգային ինովացիոն համակարգ, ապա անհրաժեշտ է ինտեգրացիոն հնարավորությունները կապել առանձին ծրագրերի հետ, որից հետո վերջինս ծառայեցնել միջազգային փորձի տեղայնացման և դեպի գլոբալ ինովացիոն համակարգ կողմնորոշված, մրցունակ ազգային ինովացիոն համակարգ ստեղծելուն¹⁰:



Գծապատկեր 1. Առանձին ինովացիոն ծրագրերի ինտեգրումը համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին որպես ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հենք (փուլային տրամաբանություն)¹¹

Այսինքն, առաջարկվող մոտեցմամբ կարևորվում են առանձին ինովացիոն նախագծերը և դրանք կատարող խմբերը, որոնք համագործակցում են ինովացիոն նախագծեր ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների, վերազգային կորպորացիաների, միջազգային առաջատար ԲՈՒՀ-երի հետ և համատեղ իրականացնում են տարբեր հետազոտական նախագծեր: Կարևորվում է նաև համաշխարհային և տարածաշրջանային «խոշոր» նախագծերին ինտեգրման խնդիրը, քանի որ խոշոր նախագծերն ունենում են նաև մեծ ֆինանսական ռեսուրսներ, ունեն ավելի բազմաֆունկցիոնալ բնույթ, ընդգրկում են տնտեսության և գիտության մի շարք ոլորտներ և այլն (տե՛ս, Գծապատկեր 1):

¹⁰ Սարգսյան Լ.Կ., «Համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ինտեգրման հիմնախնդիրները» // Եվրոպական Ակադեմիա. Գիտական հոդվածների ժողովածու #6, Երևան 2015, էջ 261-272:

¹¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Լուծելով առանձին ինովացիոն խոշոր նախագծերում ընդգրկված լինելու խնդիրը՝ առաջին հերթին հնարավորություն է ստեղծվում գործնական հարթությունում տիրապետել նման նախագծերում աշխատելուն: Դա կարող է նաև հետագայում ուղղվել Հայաստանում այդ փորձի տեղայնացմանը, ինչպես նաև վերջինիս վրա հիմնվելով ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանը, այսինքն, առաջարկվում է հակառակ մոտեցումը. ոչ թե առկա է ազգային ինովացիոն համակարգ, որը թույլ է տալիս մասնակցել խոշոր հետազոտական նախագծերին, այլ ընդհակառակը, տվյալ նախագծերին մասնակցության հնարավորություն ստեղծելով՝ փորձը բերվում է Հայաստան՝ ստեղծելով սեփական ինովացիոն համակարգ:

ՀՀ-ում միջազգային փորձի տեղայնացման համար առաջարկվել են երկու սցենարներ.

● **Սցենար առաջին.** Եթե ՀՀ-ն իր առջև դնում է համաշխարհային առաջատար երկրների փորձի տեղայնացումը և միայն հիմք է ընդունում տվյալ ոլորտում առաջատար պետության փորձը, որի համար անհրաժեշտ կլինի սկսել համագործակցություն և փորձի փոխանակում հետևյալ երկրների հետ՝ ԱՄՆ, Կորեա, Սինգապուր, Չինաստան, Մեծ Բրիտանիա և այլն: Ուստի, համաշխարհային ինովացիոն համաթվով ներկայացվել է ԱԻՀ-ը կազմող յուրաքանչյուր ցուցանիշի գծով առաջատար երկրների ցանկը և ամեն մի ցուցանիշ կամ ոլորտ բարեփոխելու կամ կատարելագործելու համար առաջարկվել է ընտրել հենց այդ երկրների փորձը:

Այս տեսանկյունից կարելի է օգտագործել «աշխարհի ինովացիոն քարտեզ» հասկացությունը: Ներկայացնելով, թե որ ինովացիոն ցուցանիշներով, որ երկիրն է աշխարհում առաջատարը, կարծես թե նախանշվում է աշխարհի երկրների կամ առանձին ցուցանիշներով համաշխարհային առաջատարների ինովացիոն քարտեզը: Այս առումով, հեղինակը կարևորում է այն փաստը, որ Հայաստանը պետք է կարողանա նաև կառուցել իր «համագործակցության ինովացիոն քարտեզը», այսինքն՝ ինովացիոն շահերի և համագործակցության աշխարհագրությունը:

● **Սցենար երկրորդ.** Կարելի է դնել որոշակի միջինացված ազգային ինովացիոն համակարգի մոդել ունենալու նպատակ, որը կլինի կա՛մ խառը տարբերակով, կա՛մ ինտեգրված այս կամ այն ավելի խոշոր ինովացիոն համակարգին: Այս սցենարը բավականին համեստ է, իսկ դրա իրագործելիության հավանականությունն՝ ավելի մեծ:

Սակայն, ցանկացած սցենարով առաջնորդվելիս, ազգային ինովացիոն համակարգի հիմքում պետք է դնել այնպիսի գաղափար, ինչպիսին է միջազգային պրակտիկայում ընդունված «ինովացիոն վերելակների» ստեղծումը, որը նշանակում է, որ ինովացիոն գործունեության արդյունքը, հայտնվելով այդ վերելակի «առաջին հարկում»՝ ունենում է հստակ մշակված բարձրանալու մեխանիզմներ և ավելի մեծ վերելքների հասնելու հնարավորություն: Հայաստանում կարելի է ասել, ոչ թե գործում է «ինովացիոն վերելակի» գաղափարը, այլ ինովացիոն գաղափարների «հորատման» մոդելը, քանի որ շատ դեպքերում նոր ծնված գաղափարները չեն հասնում առևտրայնացման, այլ մնում են թղթի վրա, կյանքի չեն կոչվում, կամ լավագույն դեպքում փոխում են միջավայրը, հայտնվում են արտերկրյա իրականության

մեջ, որտեղ էլ նրանց տրվում են հնարավորություններ ավելի մեծ արդյունքների հասնելու և իրենց գաղափարները զարգացնելու համար:

Այսպիսով, անհրաժեշտ է մշակել գործողությունների լրացուցիչ միջնաժամկետ ծրագիր, ինչպես նաև քաղաքականության գործիքներ՝ ուղղված ԱԻՀ շրջանակներում անհրաժեշտ ինստիտուտների, բացակայող փոխադարձ կապերի ձևավորմանը և ամրապնդմանը, որոնք կապահովեն վերջինիս համար արդյունավետության և մրցունակության բարձրացում և ՀՀ ԳՀԿԿԱ աշխատանքներով զբաղվող ձեռնարկությունների և ինստիտուտների ինտեգրման հնարավորություն ավելացված արժեքի ստեղծման և բաշխման գլոբալ շղթաներին:

Այս համատեքստում, հիմք ընդունելով 2011թ. Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգի շրջանակներում ներկայացվող ազգային ինովացիոն համակարգի հենասյուները¹² և դրանց շրջանակներում նախաձեռնությունները¹³, վերլուծության արդյունքում առաջարկվում է գիտահետազոտական նախաձեռնությունների, ինչպես նաև ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ հստակ գործող բաղադրիչների և դրանց միջև առկա մեխանիզմների լոգիստիկ շղթայի համալրում հետևյալ բաղադրիչներով.

Իրավական հենք՝

ՀՀ ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարությունը ունի որոշակի սահմանափակումներ, քանի որ փաստաթուղթը ուշադրությունը կենտրոնացնում է վերազգային կորպորացիաների ներգրավման և հայկական ֆիրմաների միջազգայնացման վրա և չի անդրադառնում ԱԻՀ բաղկացուցիչներին և դրանց միջև կապերին, ինչը կապահովեր վերջինիս արդյունավետ գործունեությունը և կնպաստեր միջազգայնացմանը: Ուշադրությունից դուրս է նաև գործարար հատվածը, որը նորարարությունների ներդրման ոլորտն է: Հայեցակարգում պատշաճ ուշադրության չեն արժանանում այնպիսի գործոններ, որոնք կնպաստեն ԳՀԿԿԱ-ով զբաղվող հայրենական ընկերությունների և ինստիտուտների ինտեգրմանը ավելացված արժեքի ձևավորման գլոբալ համակարգին:

Կրթություն՝

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթություն-գիտություն-արտադրություն կապի ապահովման լավագույն մեխանիզմը համալսարաններին կից գիտահետազոտական կենտրոնների ստեղծումն է, որոնք սերտորեն համագործակցում են նաև գործարար հատվածի հետ՝ արտոնյալ պայմաններով տրամադրելով պետական բյուջեի միջոցներով ստացված գիտատեխնոլոգիական արդյունքները: Հայաստանում այս մեխանիզմը կարելի է կիրառել ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների ինտեգրման և համագործակցության միջոցով՝ ապահովելով նաև գործարար հատվածի, ներառյալ՝ արտասահմանյան ընկերությունների միջև փոխադարձ ամուր կապեր:

¹² «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության» հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի N 6 արձանագրային որոշման հավելված, էջ 7:

¹³ «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության» հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի N 6 արձանագրային որոշման հավելված, էջ 14:

ԲՈՒՀ-երի և ձեռնարկությունների կապն ազգային ինովացիոն համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է ՏՀՏ ոլորտի մի շարք օտարերկրյա ընկերություններ համագործակցում են հայկական ԲՈՒՀ-երի հետ կադրերի պատրաստման գործում: Սա լավ փորձի օրինակ է, որը կարելի է ընդլայնել՝ հասնելով նաև համագործակցության այլ ոլորտներում:

Համակարգաստեղծ և ինտեգրացիոն նախաձեռնություններ՝

ՀՀ ԳԱԱ-ի գիտահետազոտական ինստիտուտների ողջ համալիրը, ինչպես նաև ՀՀ բոլոր գիտահետազոտական ինստիտուտները պետք է կազմեն մեկ լիարժեք գործող ազգային ինովացիոն համակարգի համակարգաստեղծ տարրերը՝ փոխադարձ աջակցության և սիներգիայի սկզբունքներից ելնելով տալով գիտական արդյունք: Մյուս կողմից, ՀՀ ԳԱԱ կազմում գիտահետազոտական ինստիտուտների կողմից ստեղծված արդյունքների առևտրայնացման համար անհրաժեշտ է ստեղծել «Գիտական-գործնական և գիտատեխնոլոգիական կենտրոն», որի կողմից կիրականացվեն արտոնագրումից մինչև առևտրայնացման գործընթացներ ապահովող գործառույթները:

Անհրաժեշտ է նաև ունենալ միջազգային խոշոր հետազոտական նախաձեռնություններին միանալու ինտեգրացիոն մեխանիզմ, որը կունենա միջազգային դրամաշնորհային հայտերի մշակման, թիմերի կազմման, տարբեր լեզուներով զեկույցներ պատրաստելու, մասնագիտական թարգմանություններ իրականացնելու գործառույթ, ինչպես նաև լիարժեք մեկ պատուհանի կամ կենտրոնի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի հայտերի մրցունակության բարձրացման և դրանց հաղթելու հավանականությունը մեծացնելու հարցում: Վերջինս կլինի լիարժեք պետական աջակցություն միջազգային խոշոր հետազոտական նախաձեռնություններին միանալ ցանկացող գիտահետազոտական ինստիտուտների, թիմերի և անհատների համար:

Ֆիզիկական ենթակառուցվածքներ՝

Գործարար հատվածում նորամուծությունների սահմանափակության հիմնական պատճառը ինովացիոն գործընթացում միջնորդների, աջակցության գործուն մեխանիզմների և գործիքների սակավությունն է:

Չափազանց կարևոր է քաղաքականության մեջ ձեռնարկվող միջոցառումների արդյունքների մշտադիտարկումը և գնահատումը վերջինիս մշակման և իրագործման մոտեցումների կատարելագործման նպատակով: Արդյունքում կմեծանա իրականացվող քաղաքականության արդյունավետությունը, կբացահայտվեն այն ոլորտները, որտեղ երկիրը գրավում է առաջատար դիրքեր, ինչպես նաև կոնկրետ ոլորտներում մրցունակ կոլեկտիվների առկայությունը:

Մարզերում և համայնքներում գիտության զարգացման համար անհրաժեշտ է բոլոր մարզպետարաններին, քաղաքապետարաններին կից ստեղծել անկախ ինովացիոն զարգացման կենտրոններ, որոնց համար կարելի է կիրառել Ճապոնիայում գործող ուղեղային կենտրոնների փորձը: Սա հենց այն մոտեցումն է, որն ապահովում է ամբողջ պետական համակարգում ինովացիոն գործունեության խթանումը և կարելի է ասել գաղափարական (ուղեղային) կենտրոնների առկայությունը: Հատկապես, եթե հնարավոր լինի ապահովել այդ միավորների կամ

կենտրոնների անկախ գործունեությունը՝ դրանք, իսկապես, կարող են վերաճվել «գաղափարական» կամ «ուղեղային» կենտրոնների, որոնք ամեն քայլի կմատուցեն այն նորամուծական փաթեթներն ու նախագծերը, որոնք կտանեն ՀՀ ինովացիոն համապետական և ազգային համակարգի ձևավորմանը:

Ֆինանսական ենթակառուցվածքներ՝

Հայաստանում ըստ էության բացակայում է ինովացիոն ձեռնարկություններին վաղ շրջանում ֆինանսավորելու համակարգը, ինչպես օրինակ բիզնես հրեշտակները և վենչուրային հիմնադրամները (բացառությամբ SCS ոլորտի): Ուստի կարևոր է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի փորձի կիրառումը ինովացիոն և բարձր տեխնոլոգիական այլ ոլորտներում ևս, մասնավորապես կապված մասնավոր և պետական ֆինանսական ռեսուրսների ներգրավման, միջազգային կառույցների հետ համագործակցության և պետական-մասնավոր հատվածների համագործակցության հետ:

Այսպիսով, անհրաժեշտ է մեծացնել թեմատիկ ֆինանսավորման մասնաբաժինը բազիսայինի համեմատ՝ ելնելով պետական առաջնահերթություններից, երկրի մրցակցային առավելություններից (ֆիրմաներ) և համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից: Չափազանց կարևոր է, որ թեմատիկ ֆինանսավորումը տրամադրվի ուղղակի գիտական կազմակերպություններին, խմբերին կամ առանձին գիտնականներին՝ բացառելով միջնորդների առկայությունը: Սա կնպաստի նաև ֆինանսավորող և փորձագիտական մարմինների անկախությանը:

Նշված հարցերի կարգավորման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է Հայաստանում բարձրացնել ներքին ծախսերը, որոնք ուղղվում են գիտությանը՝ նպատակադրելով դրանք հասցնել համաշխարհային միջին ցուցանիշներին¹⁴: Չափազանց կարևոր է նաև ներդնել պետական գնումների՝ որպես տեխնոլոգիաների նորացման խթանման մեխանիզմի համակարգը, երբ պետական մարմիններին անհրաժեշտ է կայացնել պետության պահանջներին համապատասխանող որոշումներ՝ ապահովելով նաև երկար փողերի ուղղորդումը դեպի գիտություն:

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ «ինովացիոն բանկ», որը կաշխատի առանձնահատուկ իրավական ռեժիմում, այսինքն՝ իր մասնագիտական ուղղվածությամբ, վարկավորմամբ և այլն կտարբերվի ՀՀ-ում գործող մյուս բանկերից, քանի որ կզբաղվի բացառապես ինովացիոն նախագծերի և “start up” կամ նոր ինովացիոն գործունեություն սկսող կազմակերպությունների ֆինանսավորմամբ: Այս բանկի գործառույթներից պետք է լինի նաև առանձին խոշոր ներդրումային հիմնադրամների, ինչպես նաև խոշոր ինովացիոն կենտրոնների հետ համագործակցության շրջանակների ընդլայնումը, քանի որ իրականում բանկը կարող է հանդիսանալ ոչ միայն ֆինանսական ռեսուրսներ տրամադրող, այլ նաև ներգրավող, ինչպես նաև ստեղծված արդյունքների առևտրայնացման համար արտերկրից գործընկերներ որոնող: Նման ֆինանսական միջնորդական ծառայություններ մատուցող հատուկ կարգավիճակ

¹⁴ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS>

ունեցող կառույցները կարող են բացել դռները նորամուծությունների ոլորտ ֆինանսական ռեսուրսներ մուտք գործելու առումով:

Գործարար և ներդրումային միջավայր՝

Փոքր բաց տնտեսությունների համար չափազանց կարևոր է գործուն միջազգային կապերի հաստատումը: Փոքր շուկայի պայմաններում այս կապերը ԱԻՀ արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայման են, որոնք կապահովեն հայրենական գիտատեխնիկական ներուժի և միջազգային ընկերությունների համագործակցությունը: Այսինքն համագործակցությունը պետք է իրականացնել ոչ միայն ինովացիոն ցիկլի առաջին փուլում, այն է՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացում (գաղափարների և ուղեղների արտահոսք, արդյունքները չեն ներդրվում մեր երկրում) այլ նաև վերջին՝ առևտրայնացման փուլում: Ուստի ստեղծված ազատ տնտեսական գոտիները անհրաժեշտ է կողմնորոշել նաև գիտատար ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը (S<S փորձ): Նույն նպատակին պետք է ծառայի նաև Սիլիկոնային հովտում ստեղծված ներկայացուցչությունը:¹⁵

Անհրաժեշտ է ավելի արդյունավետ դարձնել աշխատանքն՝ ուղղված մասնավոր հատվածում ինովացիոն գործունեության խթանմանը, հիմնվելով առկա նախաձեռնությունների վրա: Կարելի է նաև ուժեղացնել Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամի դերը, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով և ունի S<S ոլորտի սահմաններից դուրս եկող իրավասություններ:

Հայկական սփյուռքը կարևոր պոտենցիալ ռեսուրս է՝ երկրում ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար: Սփյուռքի ներկայացուցիչները, որոնք արտերկրում հաջողության են հասել ձեռնակատիրական գործունեության մեջ, կարող են կիսվել իրենց փորձով, ինչպես նաև ֆինանսավորել Հայաստանում նոր ձեռնարկությունների զարգացումը (քիզնես հրեշտակներ), դրանով իսկ օգնելով հաղթահարել ներքին շուկայի սահմանափակության դժվարությունը: Ուստի կարևոր է ուսումնասիրել հայկական սփյուռքի ներուժի օգտագործման հնարավորությունները՝ երկրում ինովացիոն ձեռնարկատիրությանն աջակցելու համար:

Այսպիսով, հետազոտության ընթացքում բացահայտվել է, որ եթե ընդունենք, որ ՀՀ-ն ունի այս կամ այն չափով ձևավորված ազգային ինովացիոն համակարգ, ապա վստահաբար կարելի է ասել, որ մի շարք միջազգային համաթվերի, ինչպես նաև արդյունքային ցուցանիշերի տեսանկյունից այն ոչ մրցունակ է: Սա նշանակում է, որ կա՛մ հիմնովին պետք է վերանայվի և նոր տողից սկսվի ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը, կա՛մ արդիականացվի ու կատարելագործվի գործողը:

Արեճախոսության եզրակացություններ բաժնում ամփոփվել և ներկայացվել են հեղափոխության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները.

- Ուսումնասիրելով ինովացիաների բնագավառում մեծ հաջողությունների հասած երկրների փորձը՝ շեշտադրվում է, որ ինովացիաների ազգային մոդելը

¹⁵ Европейская экономическая комиссия Организации Объединенных Наций, Обзор инновационного развития Республики Армения, Нью-Йорк, Женева, 2014, стр. 202.

ձևավորելիս հարկ է մշակել բազմավեկտոր զարգացման քաղաքականություն՝ առանց անտեսելու ինովացիաների զարգացման գործում համակարգաստեղծ տարրերի ձևավորման արդիական և համակարգային մոտեցումները:

- ՀՀ-ում հետազոտական աշխատանքներով զբաղվելու մարդկանց մոտիվացիան բավականին ցածր է: 2009-2015թթ. ընթացքում ՀՀ-ում մոտ 25%-ով գիտահետազոտական ոլորտում մարդկային ներուժի անկում է գրանցվել: Նման զարգացումները վտանգում են ՀՀ-ում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման գործընթացը:
- Գիտահետազոտական նախագծերը, որոնք ֆինանսավորվում են պետության (մասնավորապես, ԳՊԿ) կողմից հետագայում պետք է ներառվեն նաև լիազոր մարմին հանդիսացող նախարարության կողմից իրականացվող ծրագրերի մեջ: Սակայն գործնականում նման համագործակցության մեխանիզմներ կամ գործիքներ չկան:
- Հայաստանում բացառությամբ SCS ոլորտի, գոյություն չունի գիտատեխնիկական արդյունքների առևտրայնացման ընդհանուր ռազմավարություն, որը հաշվի կառներ գործարար հատվածի «ինովացիաներն ընդունելու» հնարավորությունը:
- ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք պատասխանատու են կրթության համար, իսկ ԳԱԱ-ն՝ հիմնարար հետազոտությունների, ձևավորում են այսպես կոչված «մինչգումբոյդան» համակարգը, մինչդեռ զարգացած երկրների մեծ մասում կրթական համակարգը համապատասխանում է 19-րդ դարի կեսերին ձևավորված Վ. Գումբոլդի գաղափարներին, որը նախատեսում է կրթական գործընթացների և գիտական գործունեության միասնականություն:
- Ատենախոսության շրջանակներում իրականացված տնտեսաչափական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ գիտության ոլորտում կատարվող ծախսերը, որոնց գերակշիռ մասը կատարվում է պետության բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև ստեղծված գիտատեխնիկական արդյունքները որևէ ազդեցություն չունեն մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների՝ ՀՆԱ ֆիզիկական ծավալի ինդեքսի և արտահանման կազմում բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժնի բարելավման վրա: Սա մատնանշում է ՀՀ-ում «գիտություն-կրթություն-արտադրություն» շղթայի առկա խզումները, ինչի արդյունքում գիտատեխնիկական արդյունքները չեն ներդրվում տնտեսության մեջ:
- Մրցունակ տնտեսությունը կարելի է բնորոշել նաև նորամուծական հզոր բաղադրիչ ունենալու հանգամանքով, իսկ նորամուծություններն առանց ազգային զարգացած ինովացիոն համակարգի չեն լինում: Մրցունակության 2014-2015թթ. համաթվով Հայաստանը 6 կետով թուլացրել է իր դիրքերը և հայտնվել է 85-րդ հորիզոնականում: Նորամուծությունների հենասյան ցուցանիշներով մեր երկիրն անգամ հարյուրյակի մեջ չի մտնում, իսկ դա նշանակում է, որ ինովացիոն բաղադրիչը Հայաստանին մրցունակություն չի

ապահովում, իսկ ազգային ինովացիոն տնտեսություն ձևավորելու համար արված քայլերը շոշափելի արդյունք չեն տալիս:

- Վերլուծելով տարբեր տեսաբանների, միջազգային կառույցների կողմից առաջարկվող ազգային ինովացիոն համակարգի սահմանումները և բնորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով համաշխարհային տնտեսության զարգացման արդի միտումները՝ առաջարկվել է ազգային ինովացիոն համակարգի լրամշակված, ընդգրկուն սահմանում:

Ազգային ինովացիոն համակարգը հասարակության բարեկեցության բարձրացման, գլոբալ և տարածաշրջանային ինովացիոն համակարգերին ինտեգրման նպատակով տվյալ երկրի սահմաններում ինովացիոն քաղաքականություն և գործունեություն իրականացնող ինստիտուտների ամբողջություն է, որոնց գործունեության արդյունքներն առկարայնացման միջոցով ներդրվում են ոչ միայն ազգային, այլ նաև համաշխարհային տնտեսության մեջ:

- Հայաստանի մասնակցությունը խոշոր հետազոտական ծրագրերին հնարավորություն կտա համապատասխան թիրախային խմբերին մասնակցելու գիտության և տեխնիկայի առաջնակարգ հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջազգային ծրագրերի իրականացմանը, օգտվել միջազգային գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից, բարձրացնել տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման միջազգային ծրագրերում, ավելացնել հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները և այլն: Դա կարող է հետագայում ուղղվել Հայաստանում այդ փորձի տեղայնացմանը, ինչպես նաև վերջինիս վրա հիմնվելով ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանը:
- ՀՀ-ում միջազգային փորձի տեղայնացման համար առաջարկվել են երկու սցենարներ.
 - Առաջին սցենարի համաձայն, հիմք է ընդունում միայն տվյալ ոլորտում առաջատար պետության փորձի տեղայնացումը, որի համար անհրաժեշտ կլինի սկսել համագործակցություն և փորձի փոխանակում, մասնավորապես, ԱՄՆ-ի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, Չինաստանի, Մեծ Բրիտանիայի հետ:
 - Երկրորդ սցենարի համաձայն, դրվում է պարզապես որոշակի միջինացված ազգային ինովացիոն համակարգի մոդել ունենալու նպատակ, որը կլինի կա՛մ խառը տարբերակով, կա՛մ ինտեգրված այս կամ այն ավելի խոշոր ինովացիոն համակարգին:
- Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման առաջնային խնդիրներից է համալսարան-արտադրություն հետազոտական համագործակցության ընդլայնումը: Այս կապերը գրեթե բոլոր ԲՈՒՀ-երում խզվել են, որը հանգեցրել է

ԲՈՒՀ-երի մեկուսացմանը և արտադրությունից կտրված իրենց գործունեության ծավալմանը: Չկան երկկողմանի պատվերների համակարգեր՝ բացառությամբ որոշ մասնագիտությունների (SS ոլորտ և այլն), չի գործում պրակտիկայի անցկացման արդյունավետ համակարգ, իսկ դա ինքնին բուհ-արտադրություն կապի խզման դասական օրինակ է:

- Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթություն-գիտություն-արտադրություն կապի ապահովման լավագույն մեխանիզմը համալսարաններին կից գիտահետազոտական կենտրոնների ստեղծումն է: Հայաստանում այս մեխանիզմը կարելի է կիրառել ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների ինտեգրման և համագործակցության արդյունքում՝ ապահովելով նաև գործարար հատվածի, ներառյալ՝ արտասահմանյան ընկերությունների, միջև փոխադարձ ամուր կապեր:
- Անհրաժեշտ է ներդնել մշտադիտարկման և գնահատման համակարգ, որը կիրականացվի համապատասխան պետական գերատեսչության կողմից: Վերջինիս գործունեությունը պետք է լինի թափանցիկ, հետևողական ու հասկանալի, և ուսումնասիրի իրականացվող քաղաքականության ազդեցությունը ԱԻՀ բաղադրիչների և դրանց միջև փոխազդեցության վրա:
- Մարզերում և համայնքներում գիտության զարգացման համար անհրաժեշտ է բոլոր մարզպետարաններին, քաղաքապետարաններին կից ստեղծել անկախ ինովացիոն զարգացման կենտրոններ, որոնց համար կարելի է կիրառել Ճապոնիայում և այլ երկրներում գործող <<ուղեղային կենտրոնների>> փորձը: Սա հենց այն մոտեցումն է, որն ապահովում է ամբողջ պետական համակարգում ինովացիոն գործունեության խթանումը և համապատասխան կենտրոնների առկայությունը:
- Անհրաժեշտ է մեծացնել թեմատիկ ֆինանսավորման մասնաբաժինը բազիսայինի համեմատ՝ ելնելով պետական առաջնահերթություններից, երկրի մրցակցային առավելություններից (ֆիրմաներ) և համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումներից: Չափազանց կարևոր է նաև ներդնել պետական գնումների՝ որպես տեխնոլոգիաների նորացման խթանման մեխանիզմի համակարգը, երբ պետական մարմիններին անհրաժեշտ է կայացնել պետության պահանջներին համապատասխանող որոշումներ:
- Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ «ինովացիոն բանկ», որի առաջնային խնդիրներից մեկը պետք է լինի վենչուրային և ինովացիոն ուղղվածությունը: Ավելին, այս բանկի գործառույթներից պետք է լինի նաև առանձին խոշոր ներդրումային հիմնադրամների, ինչպես նաև խոշոր ինովացիոն կենտրոնների հետ համագործակցության շրջանակների ընդլայնումը, քանի որ իրականում բանկը կարող է հանդիսանալ ոչ միայն ֆինանսական ռեսուրսներ տրամադրող, այլ նաև ներգրավող, ինչպես նաև ստեղծված արդյունքների առևտրայնացման համար արտերկրից գործընկերներ որոնող կառույց:

- Փոքր բաց տնտեսությունների համար չափազանց կարևոր է գործուն միջազգային կապերի հաստատումը: Սակայն համագործակցությունը պետք է իրականացնել ոչ միայն ինովացիոն ցիկլի առաջին փուլում, այն է՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացում, այլ նաև վերջին՝ առևտրայնացման փուլում:
- «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է իրականացնել որոշակի փոփոխություններ, ինչպես նաև սահմանել ինովացիաների առևտրայնացման լոգիստիկ շղթան, ցույց տալ «ինովացիոն վերելակների» աշխատելու մեխանիզմները: Հակառակ պարագայում, միայն հասկացություններ սահմանելով, ՀՀ-ում այս ոլորտում բացեր շատ կմնան, մյուս կողմից բավականին դժվար կլինի ստեղծել հիմքեր ինովացիաների զարգացման համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Թադևոսյան Զ.Ա., Սարգսյան Լ.Կ., «Ազգային ինովացիոն համակարգ» կատեգորիայի տեսական մոտեցումների և հիմնահարցերի շուրջ», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա 7-8 (169-170) 2014, Երևան 2014, էջ 89-91:
2. Սարգսյան Լ.Կ., «Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման իրավական հիմքերը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա 9-10 (171-172) 2014, Երևան 2014, էջ 97-99:
3. Թադևոսյան Զ.Ա., Սարգսյան Լ.Կ., «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնախնդիրները՝ համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա 1-2 (173-174) 2015, Երևան 2015, էջ 83-86:
4. Սարգսյան Լ.Կ., «Համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ինտեգրման հիմնախնդիրները», Եվրոպական Ակադեմիա. Գիտական հոդվածների ժողովածու/6, Երևան 2015, էջ 261-272:
5. Սարգսյան Լ.Կ., «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները», Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները գիտաժողովի նյութերի ժողովածու, Եվրասիա միջազգային համալսարան, Երևան 2015, էջ 86-95:
6. Սարգսյան Լ.Կ., «ՀՀ գիտատեխնիկական ներուժի՝ որպես ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հիմնական գործոնի տնտեսաչափական վերլուծությունը», Ֆինանսներ և էկոնոմիկա 7-8 (191-192) 2015, Երևան 2016, էջ 30-34:

САРГСЯН ЛУСИНЕ КАРЛЕНОВНА

**МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛЬНОЙ
ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЕГО ВНЕДРЕНИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 21-ого ноября 2017 года, в 15³⁰ на заседании Специализированного совета по экономике 008 ВАК РА при Российско-Армянском университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Современный этап глобального развития характеризуется тем, что многие страны, стоящие на пути к прогрессу, признают роль человеческих ресурсов в формировании экономики, соответствующей глобальному развитию, создавая в результате экономику, основанную на знаниях или же инновационную экономику. В этом плане особую значимость приобретают меры, предпринимаемые государственными органами для создания инновационной системы, а также деятельность отдельных научных центров и вузов и коммерциализация инноваций коммерческими организациями.

Различные концептуальные и методические подходы к созданию и внедрению инновационной системы, а также пути использования успешного опыта отдельных стран могут способствовать комплексному и гармоничному развитию научно-образовательной сферы и промышленности Республики Армения. Полностью используя научный потенциал страны, можно создать эффективную национальную инновационную систему, соответствующую современным критериям развития глобальной экономики, и таким образом, завоевывать сильные конкурентные позиции на глобальном рынке.

В последнее время делаются попытки формирования инновационной экономики в Республике Армения, хотя нынешнее макроэкономическое состояние Республики Армения указывает на то, что экономика страны в настоящее время далеко не соответствует критериям всемирной инновационной экономики. Однако, по этой же причине, говорить о сформировавшейся национальной инновационной системе слишком рано, поскольку уровень развития основных элементов, формирующих данную систему, не соответствует международным критериям, и практически отсутствует взаимодействие между научно-исследовательскими лабораториями, институтами и инновационными предприятиями.

Решения вышеупомянутых проблем можно найти путем изучения опыта стран с инновационной экономикой и его локализации в Республике Армения, осуществления реформ, ведущих к инновационному развитию, на микро- и макроуровнях, а также путем формирования национальной инновационной системы, разработки и использования эффективных механизмов ее функционирования, и ее интеграции в глобальную инновационную систему. Вышеуказанное определяет актуальность тематики представляемой к рассмотрению работы.

Объектом исследования является инновационная система Республики Армения, а предметом исследования являются концептуальные проблемы локализации

международного опыта формирования инновационной системы, а также структурные изменения и тенденции развития глобальной инновационной политики.

Основная цель исследования – анализ концептуальных и методических подходов в международном опыте формирования эффективно действующей национальной инновационной системы и на этой основе предложение научно обоснованных стратегических механизмов формирования и дальнейшего совершенствования эффективной, соответствующей международным критериям и ориентированной на глобальную инновационную систему национальной инновационной системы РА.

С этой целью в исследовании поставлены и решены следующие задачи:

- Изучить и проанализировать подходы к формированию конкурентоспособной национальной инновационной системы в контексте интернационализации технологий;
- На основе анализа международного опыта формирования национальных инновационных систем, выявить потенциал ее внедрения в национальную экономику;
- Посредством эконометрического анализа выявить воздействие на основные макроэкономические показатели индексов, характеризующих научно-техническую сферу;
- Изучить проблемы формирования конкурентоспособной инновационной системы в Республике Армения в контексте тенденций развития мировой экономики;
- Обосновать необходимость интеграции национальной инновационной системы Республики Армения в основные международные исследовательские проекты и выявить проблемы, существующие в этой сфере;
- Разработать пути внедрения международного опыта в инновационную систему Республики Армения и предложить механизмы совершенствования национальной инновационной системы.

На основе проведенного исследования получен ряд научных результатов, наиболее важными из которых являются следующие:

1. Оценено влияние основных показателей, характеризующих научно техническую сферу, на индекс физического объема ВВП РА и на долю продукции наукоемкой сферы в структуре импорта, а также цепь: «наука-образование-производство», с использованием эконометрических регрессионных моделей.
2. В результате комплексного анализа индексов глобальной конкурентоспособности и инноваций, были выявлены факторы, содержащие инновационную компоненту и определяющие низкий рейтинг международной конкурентоспособности Республики Армения, для совершенствования которых была разработана наиболее комплексная и полная логистическая цепь коммерциализации результатов научно-исследовательских работ, (инициативы создания системы, правовая основа, образование, физические и финансовые инфраструктуры, бизнес-возможности) в контексте локализации международного опыта в сфере формирования национальной инновационной системы и решения проблем ее интернационализации.
3. Разработаны механизмы интеграции национальной инновационной системы Республики Армения в основные международные исследовательские проекты с целью имплементации международного опыта, определения направлений частных финансовых вложений и формирования национальной инновационной системы.

LUSINE KARLEN SARGSYAN

**INTERNATIONAL EXPERIENCE OF THE NATIONAL INNOVATION SYSTEM
FORMATION AND THE ISSUES OF ITS IMPLEMENTATION
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The abstract of the thesis for the receiving of the degree of Doctor of Economics in the speciality of 08.00.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on the 21st of November 2017, at 15³⁰ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan 0051.

ABSTRACT

Modern global development is unique by the fact that many countries on their way to progress emphasize the role of human resources as creators of a competitive economy corresponding to the global development as a result forming an economy based on knowledge that is an innovative economy. Measures taken by governmental bodies to form an innovative system, activities of scientific and higher educational establishments as well as commercialization of innovations by commercial organizations are put on an emphasis.

A number of conceptual and methodological approaches to forming a national innovation system, ways of application of successful experience of different countries may contribute to complex and harmonic development of education and industry of the Republic of Armenia. Moreover, gaining a full control over a country's scientific potential, it is feasible to form an effective national innovation system meeting the modern requirements and become competitive in the global market.

Recently, there has been an attempt to create an innovation industry in the Republic of Armenia; however the current development stage of macroeconomics of the Republic of Armenia forces the idea that the current economy of the country is far from meeting the innovation industry criteria set in global economy. For this reason, it is too early to raise the issue of a well established innovation system of the Republic of Armenia as the level of the development of the main elements forming the system does not meet the international criteria and there is a complete lack of interaction among scientific labs, institutions and innovation enterprises.

The mentioned issues, which are possible to solve through studying the leading experience of the countries with innovation economy, localizing it in the Republic of Armenia, working out effective mechanisms of its application as well as implementing macro and micro economy reforms directed to innovation development by working out a long term development strategy, define the actuality and the urgency of the thesis.

The subject of the research is the national innovation system of the Republic of Armenia and the object of study is the conceptual issues of the localization of international leading experience in the process of it as well as the structural changes and the development tendencies in global

innovation policy.

The paper aims to research and analyze conceptual and methodological approaches to international experience of forming an effective, competitive and world economy-oriented national innovation system and suggest scientifically supported strategical mechanisms of formation and further improvement of such a system in the Republic of Armenia based on the mentioned experience as well as suggest solutions to current issues.

To achieve the goal set, the thesis discusses the following issues:

- analyze approaches to forming a competitive national innovation system within the context of internationalizing the technologies;
- to reveal the feasibility of inserting a national innovation system into the national industry based on the analysis of international experience of forming such a system;
- as a result of econometric analysis, identify the impact of the main indicators defining the scientific and technology field on the main macroeconomic indicators;
- study the issues of forming a competitive national innovation system in the Republic of Armenia within current global economic development context;
- reveal the necessity and the issues of integration of the national innovation system of the Republic of Armenia into major global research projects;
- work out ways of inserting the international experience into the national innovation system of the Republic of Armenia and suggest mechanisms for its improvement.

The main scientific novelties of the dissertation that are linked to the meted objectives of the research are the following:

- The impact of the main indicators defining the scientific and technology field on the physical volumes of GDP and the share of knowledge-intensive products in exports as well as the chain «science-education- product» in the Republic of Armenia has been evaluated using econometric regressive models.
- As a result of a comprehensive analysis of global competitiveness and innovation indices the factors containing innovative component and defining the low competitive rating of the Republic of Armenia have been discovered and for the improvement of which more comprehensive and complete logistics chain of commercialization of research work has been developed (the initiative to create the system, legal framework, education, physical and financial infrastructure, business opportunities) in the context of the localization of international experience in the formation of the national innovation system and solving the issues of their internationalization.
- Integration mechanisms of the national innovation system of the Republic of Armenia into major global research projects have been worked out in the context of state and private financial investment guidance and implementing international experience.

